

346  
1100a

«ԿՈՐԶԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԿՆՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ—ՔԱՂՂՈՒՍԳՂԽՎԱՐ

№ 3

№ 3

Գրագե, սովորեցու անգրագեիմ.

Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆՃԱՏԱԿԱՆ-ԽՄԲԱԿԱՅԻՆ  
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ

ՊԵՏԱԿՈՒՆ ԸՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1929





Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ



374  
Ս

**ԿՈՐԶԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**

**ԱՆՅԱՏԱԿԱՆ — ԽՄԲԱԿԱՑԻՆ  
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

16163

A  
4144



Հր. № 933, Գրառեպոստ № 2102 (բ), Տիրամ 3000.

Պետերսբուրգի Գրառեպոստի Գլխավոր Կազմակերպչի Կողմից.

Պատվեր № 95.

## ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻ ԱՐԳԵԼԱՌԻԹՆԵՐ

Հասակավորների անգրագիտութեան վերացման գործում հաճախ պատահում են լուրջ դժվարութիւններ, վորոնք պատճառ են դառնում աշխատանքների թույլ ընթանալուն, չերբեմն ել նույնիսկ վորոշ տեղերում բնավ հնարավորութիւն չեն տալիս աշխատանքներ տանելու:

Կարևոր նշանակութիւն ունեն այն դժվարութեանները, վորոնք կապված են հասակավոր սովորողի շրջապատի իրականութեան հետ, բըղխում են նրա աշխատանքի բնույթից ու պայմաններից և կենցաղային դրութիւնից—նիստ ու կացից: Ձի կարելի ժխտել ու հաշվի չառնել, իհարկե, և այն դժվարութիւնները, վորոնք սուբյեկտիվ բնույթ են կրում և վոչ մի առնչութիւն չունեն սովորողի շրջապատի հետ: Որինակ՝ սովորելու տրամադրութիւն ու ցանկութիւն չունենալը կամ թե ուսման նշանակութիւնը չգիտակցելը և այլն: Այդպիսի բնույթ ունեցող դժվարութիւնները համեմատաբար հեշտ

ե վերացնել՝ համոզելու ազխտացիայի միջոցով, մինչդեռ որչեկտիվ բնույթ կրող դժվարութունները վերացնել չափազանց դժվար ե: Այս վերջին տեսակի դժվարութունները բղխում են շրջապատի հետեւյալ պայմաններից.—

### ա) ԿԵՆՑԱՂԱՅԻՆ.

Հաճախ ե պատահում, յերբ հասակավոր սովորողները, գլխավորապես կանալք, ծանրաբեռնված են լինում ընտանիքով, ունենում են իրենց խնամքի տակ յերեխաներ. տանն ուրիշ խնամող ձեռք չի լինում, իսկ յերեխաներին անտեր թողնել չի կարելի. հետևապես զրկվում են դպրոց հաճախելու հնարավորութունից:

Յերբեմն ել անդրազետ կանանց թույլ չի տալիս սովորելու տնային աշխատանքը: Մանավանդ յերբ կինն աշխատում ե քաղաքում վորևե գործարանում, վերադառնում ե տուն, նա պետք ե մաքրի, լվանա, թափի և հազար ու մի գործ կատարի տան մեջ: Իհարկե, այլևս ժամանակ չի մնա դպրոց հաճախելու:

Բացի սրանից ել պարապմունքները զբազխտական դպրոցներում տարվում են որվա վորոշ ժամերին, իսկ հասակավոր անդրազետի ազատ ժամերը, յեթե յերբեմն ել լինում են, միշտ

ել չեն համապատասխանում դպրոցի պարապ-  
մունքի ժամերին:

Մի ուրիշ արգելառիթ:

Դեռ մինչև որս ել լինում են դեպքեր, չերբ  
չեն թուլատրում կանանց կամ աղջկերանց  
դպրոց հաճախել: Պատահում են նաև ավելի խաչ-  
տառակ դեպքեր, չերբ ամուսիններն իրենց կա-  
նանց դպրոց գնալու համար հաջոյում են ու  
նույնիսկ ծեծում: Իհարկե, այդպիսի, կանաչ հա-  
կոտակ իրենց կամքի ու ցանկութան, զուրկ  
կմնան ուսումից:

### բ) ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

Դժվար է գրազիտություն սովորեցնել սնա-  
լին աշխատողներին: Սրանց աշխատանքի պաշ-  
մաններն այնպես են դասավորված, վոր վորոշ-  
ված ժամերին դպրոց հաճախել չեն կարողա-  
նում: Յուրաքանչյուրներն ել չափազանց անկա-  
նոն են հաճախում դասերին:

Ավելի անմխիթարական է այս տեսակետից  
բատրակների դրությունը: Ինչքան ել պարապ-  
մունքի տեղն ու ժամերը հարմարեցվում են  
նրանց աշխատանքի պայմաններին, բայց և այն-  
պես մի վորոշ մասը հնարավորություն չի ու-  
նենում դպրոց հաճախել: Մանավանդ մեր Հա-

յաստանի ուայմաններում մի քանի գավառներում, որինակ՝ Դարալագյազում, Դիլիջանում, Ջանդեղուրում և այլն, չերբ բատրակների մի մասը ձմեռ ժամանակ ձմեռանոցներումն է գըտնվում: Մարերում ընկած են իշարից սնջատ 5—6 հոգուց բաղկացած խմբակներ: Լիկկայան բացելու, այնտեղ նրանց համար առանձին ուսուցիչ ուղարկելու վոչ մի հնարավորություն չկա: Այդպիսիները, ինչքան ել սրտով ցանկանան կարգալ սովորել, չեն կարող: Յեվ չեթե, բացի դպրոցից, պարապմունքի մի այլ ձև չըտատեղծվի, նման բատրակներն ընդմիշտ գուրկ կմնան ուսումից:

#### 4) ՅՐՎԱՄՈՒԹՅՈՒՆ.

Մեզանում շատ դեպքեր են պատահում, չերբ դլուղում գրագլխության դպրոց է բացվում. սովորողների լրիվ կազմ ընդունվում է, սակայն աեղ չլինելու պատճառով անգրագետների վորոչ մասը—5—10 հոգի գուրս են մնում դպրոցից: Նոր դպրոց բացելու, չեղածի կողքին չերկրորդը, չերրորդն ունենալու հնարավորություն չի լինում նլութական և այլ միջոցների բացակայության պատճառով: Այդպիսիները, չնայած, վոր ցանկություն ունեն և ընտանեկան



նպաստավոր պայմաններում են գտնվում, բայց  
և այնպես չեն կարողանում դպրոցի միջոցով  
զբաղխուլթյուն սովորել:

Յերբեմն ել տվյալ գյուղում հասակավոր  
անդրադետները քիչ են լինում, մեկ դպրոցի  
լրիվ կոմպլեկտ չեն կազմում, ուստի և անկա-  
րելի լե լինում նրանց համար տեղական բյուջե-  
յով հատուկ զբաղխուական դպրոց (լիկեյան)  
սկսել: Ճիշտ ե, քիչ են պատահում նման գյու-  
ղեր, սակայն այդպիսի փոքրաթիվ գյուղերի հա-  
սակավոր անդրադետների մասին դարձյալ պետք  
ե հոգ տարվի, դրանք նույնպես չպիտի մնան  
անզբաղետ:

## դ) ՇԵՆՔԻ ՊԱԿԱՍԸ.

Պարապմունքները հասակավորների հետ  
տարվում են Սոցդասվարի դպրոցական շենքե-  
րում: Բացառությունները շատ աննշան են:  
Դպրոցական շենքերը, գլխավորապես քաղաքնե-  
րում, չափազանց ծանրաբեռնված են: Չեք գտնի  
դպրոց, վորտեղ որական մի քանի նվազ պա-  
րապմունք չլինի: Չնայած համարյա բոլոր դպ-  
րոցական շենքերին ել կից կազմակերպվում են  
հասակավորների դպրոցներ, բայց և այնպես  
կարիքն ամբողջութամբ դարձյալ չի բավարար-

վում: Սովորողների մի մասի համար դպրոցական հարմարութիւններով շենք չի ճարվում, ուստի և հնար չի լինում դպրոց բացելու և այդպիսիները զրկվում են դպրոցի միջոցով գրագիտութիւն սովորելուց: Լավ որինակ ե Յերևան քաղաքը, վորտեղ այս տարի բացվել են անգրագետների ու կիսագրագետների 117 խմբակներ: Վերջիները տեղավորված են համարյա բոլոր դպրոցական շենքերում, կան նաև բանվորական ակումբներում և հիմնարկներին կից գործող խմբակներ: Սակայն և այնպես աշխատանքներն ավելի ընդարձելու, սովորողների ավելի մեծ թիվ ներգրավելու հնարավորութիւն չկա շենքի բացակայութեան պատճառով:

### յե) ՈՒՍՈՒՑԻՉ ՉՈՒՆԵՆԱԼԸ.

Բոլորին հայտնի չե, վոր հասակավոր անգրագետների հետ պարասպում են չնչին բացառութեամբ Սոցդասավարի դպրոցների ուսուցիչները: Այդպիսով ուրեմն, վոր գլուղում դպրոց կա, այնտեղ և հնարավոր ե հասակավորների դպրոց ունենալ: Սակայն դեռ Սոցդասավարի դպրոցական հիմնարկների ցանցը պահանջված չափով ընդարձակ չե. դեռ շատ հեռու ընկած փոքրիկ գյուղեր ու խուլ վայրեր կան, վորտեղ դպրոց չկա:

Այդպիսի տեղերը հասակավոր անգրագետներին սովորեցնելու համար վարձով հատուկ ուսուցիչ ուղարկել դժվար է. մեր նշույթական սուղ միջոցները թույլ չեն տալիս այդ անելու: Բացի սրանից ել՝ վոչ վոք չի համաձայնվի միջանի ամսով հեռավոր անկյուններ գնալ աշխատելու, հաստատ համոզված լինելով, վոր միառժամանակից հետո դարձյալ նույն գործազուրկն է: Չէ վոր սրանից զատ հասակավոր անգրագետների համար նորմալ դպրոցի բացելը լրիվ սովորողների (25—30) կազմով կապված ենակ նստարաններ, սեղան, գրատախտակ և այլ դպրոցական հարմարություններ ունենալու խնդրի հետ: Վերջինները ձեռք բերել չի կարելի: Այդպիսով նման գյուղերում հասակավորների դպրոց ունենալուց դեռ բավական հեռու լինք, նույնիսկ, չեթե հնարավոր լինի տեղի գրագետ կարող ուժերին իբրև ուսուցիչներ ոգտագործել:

Անգամ ամենահարուստ Ամերիկայում նման փոքրիկ գյուղերում անհատական-խմբակային պարապմունքի ձև է գործադրվում:

Յեթե բացի դպրոցական ձևի պարապմունքից ուսուցման այլ ձևի չդիմենք, անկասկած Սոցդասավարի դպրոց չունեցող խուլ և հետամնաց գյուղերումն էլ հասակավորների անգրագիտության վերացման մասին խոսք անգամ չի կարող լինել:

Կարելի չե թվել և մի շարք այլ լուրջ խոչընդոտներ, վորոնք պատահում են հասակավորների անգրագիտության վերացման բնագավառում, սակայն, կարծում ենք, մեր բերած որինակները միանգամայն պարզ են հաստատելու և ապացուցելու, վոր իսկապես այդ գործի ընդարձակման, ընդլայնման խնդրում մեր առաջ ծառայում են բավական լուրջ դժվարություններ: Ամենայն լրջությամբ պետք է վերաբերվել դեպի այդ դժվարությունները և բոլոր միջոցները պետք է ձեռք առնել այդպիսիները վերացնելու: Պետք է գտնել այդ դժվարություններից դուրս գալու ճեղք: Բոլորովին ճիշտ չեն վարվում այն աշխատակիցները, վորոնք այդ դժվարություններին հանդիպելիս, ձեռքները ծալում, հուսահատվում են:

Այդ դժվարություններն անպայմանորեն կհաղթահարեն:

Որինակ՝ Հյուսիսային Կովկասում—Ուստ-Լաբինսկի շրջանում 1927 թվին «Կորչի Անգրագիտութունը» Ընկերության ուժերով և միջոցներով անհատական և խմբակային պարապմունքի ձևով սովորել են 1927 անգրագետ և 325 կիսանգրագետ:

Մեզանում՝ Հայաստանում ընթացիկ ուսումնական տարում անհատական-խմբակային ու-

սուցման ձևով սովորում են 200-ից ավել ան-  
գրագետներ:

### ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՅԵՆԵԼ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Հասակավորների անգրագիտության վերաց-  
ման խոչընդոտները հաղթահարելու համար հետե-  
լյալ միջոցներին պետք է դիմել:

Նախ և առաջ անհրաժեշտ է տվյալ գյու-  
ղում կամ վայրում հետազոտություն կատա-  
րել անգրագիտության վերացման բոլոր դժվա-  
րությունները հայտարելու նպատակով: Ապա  
այդ դժվարությունները պետք է ամփոփել,  
ներանցից վորոշ լեզրակապություններ հանել և  
վերջում միջոցներ դառնել դժվարությունները վե-  
րացնելու:

Այդպիսով, անգրագիտության վերացման  
աշխատանքների ընդլայնումը պետք է կատարել՝  
չեղնելով տվյալ միջավայրի ընդհանուր դրուժյու-  
նից և հաշվի առնելով տվյալ միջավայրում նկատ-  
ված դժվարությունները:

Պետք է միանգամ ընդմիջտ իբրև որե՛նք ըն-  
դունել, վոր նախ քան ուսման սկսելը, անհրաժեշտ  
է տվյալ գյուղում կամ շրջանում մանրագնին  
հետազոտություն կատարել, ուսումնասիրել բո-  
լոր նախադրյալները, տեղական և կենցաղային

բնույթ կրող պայմանները, վորից հետո հետազոտութեան արդյունքների հիման վրա ձեռնարկել համապատասխան ձևի ուսուցում:

Հետազոտութեանները կատարում են շրջաններում «Կորչի Անգրագիտութեանը» Ընկերութեան շրջանային խորհուրդը, իսկ գյուղերում ԿԱՆԸ-ն բջիջը խրճիթ-ընթերցարանի և գյուղխորհրդի կուլտ-սեկցիայի մասնակցութեամբ: Իսկ այն վայրերում, վորտեղ չկա խրճիթ-ընթերցարան, դպրոց, ԿԱՆԸ-ն բջիջ, հետազոտութեանը կատարում ե գյուղխորհրդի կուլտ-սեկցիան Կոմ և ԼԿՅՅՄ բջիջների ակտիվ մասնակցութեամբ:

Հետազոտութեան արդյունքները պարզելուց հետո միայն պետք ե ձեռնարկել հասակավորների անգրագիտութեան վերացման գործին: Թե չե շատ դեպքերում գործն սկսվում ե, հասակավորների դպրոցը բացվում, նորմալ քանակի սովորողներ ընդգրկում, իսկ այնուհետև արդեն անկանոն հաճախումների շարան ե բացվում և դեռ տարին չվերջացած՝ վերջին ամիսներում դպրոցում մնում ե սովորողների 25—30 տոկոսը: Շատ ե պատահում, վոր քիչ հաճախորդների պատճառով դպրոցը ժամանակից վաղ փակվում ե և հետևապես չի տալիս սպասելիք արդյունքը: Այսպիսի լերևույթի գլխավոր պատճառն այն ե, վոր նախքան գործի ծավալումը, չեն ու-

տումնատիրվում տվյալ վայրի պայմանները և ըստ  
այնմ չեն գործադրում ուսուցման այս կամ այն  
նպատակահարմար ձևը: Միայն նախնական հետա-  
զոտութիւնները, վաղորոք կատարած նախա-  
պատրաստական աշխատանքները, դժվարութիւն-  
ները հայտաբերելուց և ընդհանրապես բոլոր  
պայմանները պարզելուց հետո հնարավոր կդարձ-  
նեն անգրագետ սովորողների նպատակահարմար  
ընդգրկումը և ըստ այնմ նրանց ուսուցման նպա-  
տակահարմար ձևի կազմակերպումը, վորից հետո  
անգրագետներն իսկապես կսովորեն: Անգրա-  
գետների ուսուցման ճիշտ ձևի կազմակերպու-  
մից ե մեծ մասամբ կախված լինում ամբողջ  
գործի ընթացքը: Նախնական հետազոտութիւն  
քացակալութիւնը հաճախ առաջ ե բերում թիւ-  
րիմացութիւններ, յերբեմն ել միանգամից տա-  
պալում ե սկսած գործը:

### ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Հասակավոր անգրագետների ուսուցման  
չերկու հիմնական ձև կա. 1. դպրոցական-գրագի-  
տական (լիկկայան) և լրիվ (խմբակներ) և 2. ար-  
տադպրոցական (անհատական-խմբակալին ուսու-  
ցում իրենց տանը, խրճիթ-ընթերցարանում կամ  
այլ տեղում):

Բնորոշել այդ չերկու ձևի պարապմունքը  
կարիք չկա, վորովհետև նրանց անուններն այդ

մասին շատ պարզ են խոսում: Կարևոր է միայն մասնանշել, Վոր դպրոցում սովորում են 25—30 հոգի. իսկ խմբակում՝ դրանից սակաս, սակայն 3 հոգուց ավելի:

Յուրաքանչյուրը մեր նշած ձևերից ունի իր առավելութունն ու բացասական կողմերը:

Դպրոցական ձևի ուսուցման դրական կողմերը՝

ա) Մի ուսուցիչը միաժամանակ սովորեցնում է 25—30 հոգու:

բ) Սովորողին աջակցում է, նրա վրա ներգործում է ամբողջ կուլեկտիվը:

գ) Ամբողջ կուլեկտիվն ոգավում է մեկ կամ չերկու ձեռնարկով:

դ) Այստեղ հնարավորութուն կա աշխատանքի կուլեկտիվ ձևը գործադրելու:

Միաժամանակ դպրոցական ձևի պարսպմունքն ունի և վորոշ բացասական կողմեր. որինակ՝ դպրոցը շատ հաճախ հաշվի չի առնում (չի չել կարող) բոլոր սովորողների որչեկտիվ սոց. տնտեսական պայմանները: Իրա պատճառով էլ մեծ մասամբ առաջ են գալիս անկանոն հաճախումներ կամ միառժամանակից սովորողները մի մասը բոլորովին դադարում է դպրոց գնալուց: Իսկ դա վերջում միանգամայն ապարդյուն է դարձնում աշխատանքները: Բայցի դրանից ել, չեթե դպրոցում կան 25—30 հոգի, պետք է նկա-



տել, վոր առանձին անհատի վրա քիչ ժամանակ  
և ուշադրութիւնն ե գարձվում: Մեծ մասամբ  
որիենտիր վերցվում ե միջակ սովորողը, թույ-  
լերը և ավելի ուժեղները հուսահատվում են և  
հետզհետե դադարում են դասերին հաճախելուց:  
Յերևի հենց դրանով ել մասամբ պետք ե բա-  
ցատրել այն հանգամանքը, վոր շատ տեղերում  
բավական քիչ ուսանողներ են մնում մինչև ու-  
սումնական տարվա վերջը: Յեվ վերջապես, դըպ-  
րոցական պարապմունքը 25—30 հոգուց բաղ-  
կացած կուեկտիվի հետ պահանջում ե ուսուցչից  
ավելի մեծ մեթոդական փորձառութիւնն և կա-  
րողութիւնն, քան 1—2-ի հետ պարապելը:

Անհատական-խմբակային պարապմունքնե-  
րի դրական կողմերը՝

ա) Վերացվում են բոլոր պատճառները,  
վորոնք թույլ չելին տալիս հասակավոր անգրա-  
դետին դպրոցում սովորել:

բ) Ավելի շատ ուշադրութիւնն ե գարձվում  
անհատ սովորողի վրա, ուսուցիչը սրան ոգնե-  
լու ավելի շատ ժամանակ և հնարավորութիւն  
ունի:

գ) Ուսուցման ժամերը, տեղը հարմարեց-  
վում են սովորողի պայմաններին, նրա ազատ  
ժամերին:

դ) Ուսուցման ժամկետը—ծրագրի անցնելը  
վորոշվում ե համապատասխան տվյալ սովորողի

պատրաստականութեան և ընդունակութիւններէ:  
յե) Այս ձևի պարապմունքը հնարավոր ե  
դարձնում շատ գրապետ ու կարող ուժերի հրա-  
վիրել:

Սակայն պիտի նկատել, վոր ընդհանրապես  
այս ձևի ուսուցման ժամանակ ավելի շատ սո-  
վորեցնողներ են հարկավոր, բացի այդ, պահանջ-  
վում ե ավելի մեծ նախապատրաստական աշ-  
խատանք, կազմակերպչական և մեթոդական և  
պարբերական պլանաչափ ղեկավարութիւն:

Բայց և այնպես, ինչպես սկզբում մենք նշել  
ենք, դա միակ միջոցն ե անգրագիտութեան վե-  
րացման ասպարիզում դպրոցական ձևի պարապ-  
մունքներէ ընթացքում նկատված բոլոր դժվա-  
րութիւններն ու արգելափոխները վերացնելու:  
Այստեղ արդեն ինքը կյանքն ե թելադրում մեզ  
այս ձևի ուսուցում—անհասական-խմբակային  
պարապմունք:

Այս ձևի ուսուցումն առաջադրել ե անգրա-  
գիտութեան վերացման համառուսական 3-րդ  
համագումարը դեռ 1924 թվին: Փորձերը գործ-  
նականում վոչ թե միանգամից արագացնում են  
պարապմունքի այս ձևի նպատակահարմարու-  
թիւնը, այլ և նրան առաջնակարգ տեղ են  
տալիս:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆ

Նախքան անհատական-խմբակային ձևի պար-  
ապմունքին անցնելը, անպայմանորեն հարկա-

A 4144


1010



վոր ե կազմել աշխատանքի պլան: Աշխատանքի պլան պետք ե ունենան՝ և՛ գյուղը, և՛ շրջանը, և կենտրոնը: Պլանը կազմում են այն վայրերում, վորտեղ կարիք ե զղացվում անհատական-խմբակային ուսուցման ձևի, վորտեղ, իհարկե, հասակավոր անգրագետները և՛ կիսագրագետները հնարավորութիւնն չունեն դպրոցի միջոցներով սովորել: Պարապմունքի այս ձևով կարող են և պետք ե սովորեցնեն՝ և՛ քաղուսվարական հիմնարկները, և՛ անհատական բոլոր կազմակերպութիւնները՝ «Կորչի Անգրագիտութիւնը» Ընկերութիւնը, Արհմիութիւնները, կոոպերացիան և այլն:

Ուստի և այդ բոլոր կազմակերպութիւններն ել պետք ե՛ ունենան իրենց աշխատանքի համար վաղորոք կազմված պլան: Սակայն խառնաշփոթութիւնն առաջ չբերելու նպատակով պետք ե կազմակերպութիւններն իրենց աշխատանքները համաձայնեցնեն իրար հետ: Նախքան գործի անցնելը հրավիրվում ե ավյալ հասարակական կազմակերպութիւնների խորհրդակցութիւն՝ աշխատանքի պլան կազմելու նպատակով: Խորհրդակցութիւնը հրավիրում ե «ԿԱՆԸ» բջիջը, իսկ յետե բջիջ չկա, խրճիթ-ընթերցարանը: Պլանում պետք ե նախատեսնել՝

1. Անգրագետների և կիսագրագետների թիվը, վորոնք յենթակա յեն անհատական-խմբակային ձևի ուսուցման:



2. Սովորեցնողներին - ուսուցիչներին կազմը:

3. Կազմակերպչական սխեման:

4. Կուսակցականների, ԼԿՅՆՄ-ի և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը գործին:

5. Դասական, գրենական պիտույքների և ալիի հայթայթումը:

6. Ղեկավարությունը (պարզ մատնանշելով ով կամ վճիռ մարմինը պետք է ղեկավարի աշխատանքները):

7. Աշխատանքի հաշվառումը:

Ի՞նչպես կազմել պլանը: Վորպեսզի ավելի գործնական ու պարզ լինի մեր առաջադրածը, տեսնենք ի՞նչ պետք է անի ինքը գյուղը, յեթե նա — այդ գյուղը կարիք ունի անհատական խմբակային ձևի ուսուցման: Դրա համար դեռ ուսումնական տարին չսկսած գյուղի «ԿՄՆԸ» բջիջը հրավիրում է խրճիթ-ընթերցարանում խորհրդակցություն հետևյալ կազմակերպությունների. ներկայացուցիչների մասնակցությամբ՝ գյուղխորհրդի կուլտ սեկցիայի, խրճիթ-ընթերցարանի վարչության, Կոմ. և ԼԿՅՆՄ բջիջների, կոոպերացիայի, ուսուցչություն, գյուղանտառ միություն կին-պատգամավորուհիների, Փոկի: Անհատական խմբակային պարապմունքի նպատակն ու պատճառները բացատրելուց հետո աշ-

խատանքի բաշխում ե կատարվում ներկայացուցիչների մեջ հետևյալը պարզելու նպատակով:

Քանի հոգի և սիջեր չեն կարող առաջիկա ուսումնական տարում 1929—30 թվին գյուղում բացվելիք գրագիտական դպրոցում սովորել:

Յեթե տարրական հանրակրթական դպրոց չի բացվելու, քանի հոգի կիսագրագետներից և սիջեր պետք ե անհատական-խմբակային պարապմունքի ձևով իրենց ձեռք բերածը խորացնեն կանոնավոր գրագետ դառնալու համար:

Հաշվի չեն առնում նաև սովորողների հասակը, սոցիալական դրուժխուճը, այժմյան զբաղմունքը:

Այդ աշխատանքի համար առաջարկում ենք հետևյալ ձևը՝ (Տես աղյուսակ ձև № 1, չերես 20)

2. Հետևյալ աշխատանքը սովորեցնողների կազմի (լիկվիդատորների) խնդիրն ե: Հաշվի չեն առնում գյուղի կարող և գրագետ ուժերին՝ ուսուցիչներին, բարձր խմբի աշակերտ-աշակերտուհիներին, գրագետ ԼԿՅՆՄ և կոմբլիջի անդամներին, գրագետ բատրակներին և պատգամավորուհիներին, զորացրված գրագետ կարմիր բանակայիններին, մի խոսքով այն բոլորին, վորոնք կարող են և պետք ե պարապեն:

Յուրաքանչյուրն իր գծով այս գործը կատարելուց հետո, անմիջապես հրավիրում ե չերկ-

№ը ըստ կարգի	Ազգանուն, անուն	Սեռ		Հասակ		Այնպան գրադուներ				Մրցելից					
		Արական	Իգական	Մինչև 16 տարեկան	36-ից բարձր	Մանկ	Գրադուներ	Կամառակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	
1	Գրիգորյան Մովսես	1													
2	Մանգանյան Աստղիկ		1												
3	Հարությունյան Նարգիզ		1												
4															
5															
6															
	ԸՆԴԱՄԵՆԸ	1	2	1	2	1	1	1	1	1	1	1	1	2	2

ՂԿՍՅԹՎՍԹՍՂՈՁ

Ազգանուն, անուն

№ը ըստ կարգի

ը որդ խորհրդակցութլունը: Ամփոփվում են ներկայացուցիչները կազմած հաշվառման տախտակները: Յերբ արգեն պարզ ե, թե գլուղում քանի հոգի և սվքեր են լինթակա անհատականլամբակալին ձևի ուսուցման, քանի հոգի և սվքեր պետք ե սովորեցնեն, վորոշում են առաջին հերթին սովորողները ճշգրիտ թիվը: Հարվածալին լամբեր, վորոնք պետք ե առաջին հերթին սովորեն, համարվում են՝ քանվորները, բատրակները, նախազինակոչալինները, կոլտնտեսութլան անդամները, կինպատգամավորուհիները:

3. Այնուհետև անգրագետ կամ կիսագրագետ սովորողներին կցում են այս կամ այն սովորեցնող ուժերին. կազմվում ե առանձին ցուցակ—սվ, ում հետ պետք ե պարապի: Վորպեսզի նպատակահարմար բաշխում լինի, դպրոցից դուրս մնացած փոքրահասակները գործը հանձնարարում են հենց դպրոցի ուսուցիչներին, սովորող կամ ավարտած աշակերտները միջոցով պարապմունք տանելու: Գրագետ բատրակին պարտավորեցնում են սովորեցնի անգրագետ բատրակին, կոմսոմոլիստին—անգրագետ կոմսոմոլիստին և ալլն: Տեղի, ժամանակի նպատակահարմարութլան տեսակետից աշխատում են, վոր սովորեցնողներն ու սովորողները հարևաններ լինեն: Վորոշում են նուլնպես, թե ուսուցիչը քանի հոգու հետ ե պարապելու՝ 2-ի, 1-ի,

թե խմբի, և չեթե խմբի, ապա քանի հոգուց բաղկացած խմբի:

4. Պարզում են նաև, թե ինչքան սովորեցնող ուժ է տրամադրում ԼԿՅՆՄ-ը, Կոմկուսի բջիջը, կոոպերացիան, Փոկը, գյուղխորհրդի կուլտ. սեկցիան, «ԿԱՆԸ»: Ո՞վ սրանցից ինչքան հոգու չե սովորեցնելու, կամ վճրքան նյութական ոժանդակութունն է ցույց տալու:

Գործի վերջնական կազմակերպումը հանձնարարում են 3-4 ընկերոջ: Յուրաքանչյուրը սրանցից վերցնում է իր վրա կազմակերպելու, 10-ից մինչև 15 հոգու համար գործը կանոնավոր կազմակերպելու հոգսը և հետագայում ել մինչև ուսումնական տարվա վերջը նա չե հրսկում աշխատանքներին և նա չե գործի պատասխանատուն:

5. Արդեն պարզ է սովորողների, սովորեցնողների և գործը կազմակերպողների քանակը: Մնում է վորոշել, թե ի՞նչ դասագրքեր և գրեխան պիտույքներ է հարկավոր և վճրքան: Պարզվում է նաև — ո՞վքեր սովորողներից իրենք կարող են այդպիսիները ձեռք բերել: Չունևորների համար միջոցներ են տրամադրում ձեռք բերելու՝ գիրք, տետր, մատիտ, գրիչ, թանաք և այլն «ԿԱՆԸ» բջիջը, կոոպերատիվը, Փոկը, գյուղի կուլտ-կրթական սեկցիան:

6—7. Վորոշում են մեթոդական դեկավարութունը հանձնարարել գյուղի քաղլուսվարա-



կան և սոցդասավարի դպրոցի ուսուցիչներին: Նախատեսնում են սովորեցնողներին համար հոկտեմբերի սկզբներին հրավիրել խորհրդակցութիւն, համապատասխան մեթոդական ու կազմակերպչական ցուցմունքներ տալու համար՝ թե մեծ հետ, ի՞նչ դասագրքով և ի՞նչպէս պետք է պարապել և ի՞նչպիսի աշխատանքի հաշվառում պետք է կատարել:

Այս ձևով կազմում է գյուղն անհատական-խմբակային պարապմունքների պլանը, նախատեսելով նրանում մեր նշած 7 կետերը և այդ գործի հետազոտման ու նախապատրաստական բոլոր աշխատանքները: Վերջում գյուղի «ԿԱՆԸ»-ն բջիջն ամփոփում է պլանը նախապատրաստական աշխատանքի տվյալներով և ներկայացնում է «ԿԱՆԸ»-ն շրջանային խորհրդին, իսկ (յեթե «ԿԱՆԸ»-ն շրջանային խորհուրդ չկա, ներկայացվում է շրջաղլուսկոմին), վերջինը քննում է պլանը, և, յեթե կարիք է լինում, փոփոխութիւններով, լրացումներով շտապ կերպով վերադարձնում է գյուղի «ԿԱՆԸ»-ն բջիջին գործադրելու համար:

Պլանի և նախապատրաստական աշխատանքների տվյալների հետ միասին գյուղի «ԿԱՆԸ»-ն բջիջը ներկայացնում է շրջանային «ԿԱՆԸ»-ն խորհրդին նաև սովորողների և սովորեցնողների ցուցակը հետևյալ ձևով՝

Մուտքերի ցուցակ

		ՀԱՅԹՅՎԱԹՍՂԱԶ			
		ադեմստեղի	5	4	9
		ադեմսեղ	13	11	24
		զտիմհատարսի	11	9	20
ազտեղիքի 7 թանգտ վ-ՈՂԹԿՂ		4	5	9	9
ազտեղիքի 7 թանգտ վարսիսի		3	2	5	9
Մասնիկ	Ի Բ Ղ	4	11	—	6
	թանգտ վեմստեղի	4	2	—	6
	-զտմ թմտի զտիմստեղ	1	—	—	1
	վարսմստեղի	2	7	—	9
Այլմասն գրադ-մունք	թանգտ ոգտեղի	—	—	—	—
	հ ս Լ տ ս տ Ջ	7	1	—	8
	կ տ մ տ տ Վ	7	10	—	17
	վ մ տ հ Դ ս Լ Վ	10	4	10	24
	մ ս Ի զ տ Վ	—	1	—	1
Հասակ	մարտի 1-28	—	1	—	1
	հրամա 28 զհրմ 1-28	3	15	10	28
	զտիգմտ 28 զհրմ	3	4	—	7
Ստ.	զ տ կ տ Է Վ	8	10	9	27
	զ տ կ տ մ Ղ	8	6	—	14
միմի մարտեղի վարսմստեղ		18	15	38	38
միմի միմի		—	3	—	3
ՀԱԹՈՎ					
-ՈՂՈՎ ԲՅ Գ Զ.ՈՎՈՂՈՂ					
		Անհատակ		Ստեղծակ	Ընդամենը

Մովորեցնողները ցուցակ

24 № 3

		<b>ՀՎՍԹՑՎՍԹՍԱՂՈՁ</b>	
<b>Սևուր</b>	զտիտեղ	9	9
	Արտաշ	11	11
<b>ԵՂՂՈՂՆՆԵՆ</b>		20	20
<b>Պարսպուս ևն</b>	Խաչմուխ	—	—
	Վճ	20	20
<b>Թ Լ Ի Ն</b>		2	2
<b>ՎՅՎՅԵՎ Կ-ԵՂՂՈՔ</b>		18	18
<b>ԼԿՅԵՄ-ի տնայում</b>	Աղջկ	9	9
	Տղա	5	5
<b>Առավեր- ուսման</b>	Աղջկ	4	4
	Տղա	8	8
<b>Վերստ -րտ Նախ և Ստրա</b>		18	18
<b>Հիմարտ -րտ Վանաձորի Կոտի -տու Վր և Վր</b>		2	Սողոմոնյ

Այս ձևով ե կազմում գլուղը սովորողներին  
և սովորեցնողներին ցուցակը,

Այսպիսով ամբողջ գործի կազմակերպումը  
և ընդհանուր դեկավարությունն իրենց վրա  
պետք ե վերցնեն գլուղում «ԿԱՆԸ»-ն բլիշը,  
իսկ շրջանում շրջանային «ԿԱՆԸ»-ն խորհուրդը  
կամ, լեթե չկա, շրջապալուսկոմը: Այստեղից  
պարզ բղխում ե, վոր, լեթե չկա գլուղում  
«ԿԱՆԸ»-ն բլիշ, իսկ շրջանում «ԿԱՆԸ»-ն շրջանա-  
յին խորհուրդ, պետք ե կազմակերպել այդպի-  
սիները:

**ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
— ԽՄԲԱԿԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԲԸ**

Յերբ կա աշխատանքի պլան, հայտնի լե՝  
մվքեր պետք ե սովորեն քանի՞ անգրագետ, քա-  
նի՞ կիսագրագետ, պատրաստ ե սովորեցնողնե-  
րի կազմը, ձեռք են բերվել նաև դասագրքերն  
ու բոլոր պահանջվելիք գրենական պիտույքները  
(տես եջ 22), մնում ե միայն անմիջապես գործի  
անցնելու համար աշխատանքը կարգավորել այս-  
պես՝ վորոշել սվ, լե՛րբ, վո՛ր որերին, որվա վո՛ր  
ժամերին, վո՛րտեղ, ո՛ւմ հետ պետք ե պարապի,  
պարապմունքն անհատական ե լինելու, թե՛  
խմբակային: Նպատակահարմար ե շատ տեղե-

բում մեր պայմաններում ունենալ 4—5 հոգուց բաղկացած խմբակներ:

Պարապմունքի տեղն ու ժամերը սովորեցնողները և սովորողները մանրամասնորեն համաձայնեցնում են իրար հետ — կամ սովորողն և գնում սովորեցնողի մոտ՝ տունը, կամ ընդհակառակը: Խմբակային պարապմունքները կարող են տարվել բացի տներից՝ նաև խրճիթ-ընթերցարանում, ակումբներում, դպրոցներում, կարմիր անկյուններում, կամ այլ խորհրդային հասարակական հիմնարկներում: Պարապմունքը կարող է լինել և որմեջ: Պարապմունքի տևողութունը պիտի լինի 6 ամիս, իսկ քաղաքներում և, չեթե հնարավոր է, շրջանային կենտրոններում — 10 ամիս: Սակայն այստեղ ճշգրիտ ասել պարապմունքի ժամկետը դժվար է: Հենց դա չե անհատական-խմբակային ձևի պարապմունքի առավելութուններին մեկը, չերբ յուրաքանչյուր դեպքում ժամանակը վորոշվում է, նկատի ունենալով տվյալ սովորողի պատրաստութունը, ընդունակութուններն ու աշխատասիրութունը և նրա սովորելու գործով զբաղվելու չափը. այսինքն՝ վորքան որքեկտիվ պայմանները թույլ են տալիս սովորողին, ինչպես նաև սովորեցնողին, իրենց ժամանակը կարգավորելու:

Կլինեն կիսազբազեաներ, վորոնք հնարավոր

ըությունն չեն ունենա նույնիսկ որմեջ պարապելու: Կամ թե կարող ե պատահել, վոր այս ձևի ուսուցման համար համապատասխան վորակով և քանակով ուսուցիչներ չլինեն: Այդպիսիներն արդեն պարապում են վոչ թե ամեն որ, կամ որմեջ, այլ ցուցմունքներ են ստանում պարապելու ինքնազարգացման ձևով՝ շարաթական մեկ-չերկու անգամ: Այսպիսի կիսազրագեաները խորհուրդներ ու ցուցմունքներ կարող են ստանալ խրճիթ—ընթերցարանից: Իսկ չեթե դուրսում խրճիթ-ընթերցարան չկա, անզրագիտության և կիսազրագիտության վերացման հիմնարկ չկա, այդ դեպքում՝ դպրոցի ուսուցիչներից:

Այս ձևով իրենց գիտցածը յուրացնողներն ու ամրացնողները, ձեռք բերածն ավելի զարգացնողներն ու ընդարձակողները կմտնեն ինքնազարգացման խմբերի մեջ:

Պիտույքների հայթայթման անհատական-խմբակային պարապմունքների համար յուրաքանչյուր սովորողի վրա (համաձայն Քաղլուսգլխավարի ընդունած նախահաշվի) ծախսվելու լի 7 ուր. 48 կոպ:

Անգ. խմբ. ուսուցում—6 ամիս տևող. սովորում են խմբա-  
կում 3—15 հոգի, նախաճաշիվը կազմված է յուրաքանչյուր սովո-  
րողի համար:

Քանակ կարգի	Փայտերի քեսակը	Քանակը	Գինը		ԳՈՒՄԱՐԸ	
			Ռ.	Կ.	Ռուբ.	Կ.
<b>ա. Ա.Շխառսավարձ</b>						
1	Ուսուցչին 1-ին աստիճանի զպրոցի ուսուցչի աշխատա- վարձի 1,60 մասն յուրաքան- չյուր սովորողի ամսական .	1	—	83	4	98
2	Սոցապ հ տեղիում 10,75 <sup>0</sup> / <sub>0</sub>		—	10	—	60
					5	58
<b>բ. Ուսումնական</b>						
3	Դասադիրը . . . . .	1	—	50	—	50
4	Տեղադիր . . . . .	5	—	04	—	20
5	Մատիտ . . . . .	2	—	05	—	10
6	Գրչակոթ . . . . .	1	—	05	—	05
7	Ծծողական թուղթ . . . . .	2	—	03	—	06
8	Թանաք . . . . .					05
9	Գրչածայր . . . . .	6	—	01	—	06
10	Լրագիր 2 ամսական 1-ական սրինակ . . . . .	2 սր.	—	20	—	40
					1	42
<b>Մեկ սովորողին .</b>					7	—

**Ծանոթություն.—**2ի նախաճաշի համար՝

Չեռնարկ ուսուցչի համար . . . . . 50 կ.

Հաշվհառման մատյան . . . . . 50 »

Ծրագիր . . . . . 10 »

**Ընդամենը 1 ու 10 կ.**

նկատի ունենալով, իր սրանք կտաացվեն կենտրոնից:

Պիտոււքները, դասագրքերը աալիա ե ճրի «ԿԱՆԸ»-ն բջիջը, իսկ հասարակական կազմակերպութիւունները՝ կոոպերացիա, արհմիութիւններ և այլն միջոցներով կազմակերպութիւնները ամբողջ ծախքը հոգում են համապատասխան կազմակերպութիւններն անմիջականորեն, կամ թե «ԿԱՆԸ»-ն բջիջի միջոցով: Վերջին դեպքում արդեն «ԿԱՆԸ»-ն բջիջի և հասարակական մշուս կազմակերպութիւնները՝ մեջ պետք ե վորոշ համաձայնագիր լինի, թե ով, չէրբ, ինչ, վճարան վճարի և ինչի համար վճարի:

Սովորողներից ով-վոր միջոցներ ունի, ինքն ե ձեռք բերում: Պարապմունքը տարվում ե համարյա ճրի:

**ՁՐԻ ՊԱՐԱՊԵԼՈՒ ԶԱՆԱԶԱՆ ԶԵՎԵՐ ԿԱՆ.**

**ԹՎԵՆՔ ՍՐԱՆՑԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ**

1. Ինքնակամ սովորեցնելը, չերբ ուսուցիչն ինքն իր հոժար կամքով ցանկութիւն ե հայտնում պարապելու: Մեզանում մինչև որս վարձով պարապելու դեպքեր չեն չեղել: Որինակ՝ ընթացիկ ուսումնական տարում Հայաստանի բոր ծայրամասերում ուսուցչութիւն մեծ մասը պարապում ե համարյա ճրի:

2. «ԿԱՆԸ»-ն անդամակցելու կարգով: Ըն-



կերութեան բջիջն իր միջից ընկերներ ե տրամադրում պարապմունքների համար:

3. Արհմիութեան կարգով, չերբ տեղկոմը կուեկտիվի անդամներին փոխադարձ համաձայնութեամբ հանձնարարում ե վորեե մեկին ուսուցանելու:

4 Նույն ձևով տարվում ե նաև շեֆութեան կարգով:

5. Հասարակական հանրագում աշխատանք կատարելու կարգով: Այս աշխատանքը կարող են տանել դպրոցները, դպրոցի առանձին խմբակները, առանձին աշակերտներ, Կոմկուսի յեմ ԼԿՅԵՄ-ի անդամները, Միութեան անդամները ե այլն:

Հսկայական գործ կարող են կատարել դրպրոցներն ու կոմսոմոլը: Այս տարվա փորձն արդեն յեկավ ապացուցելու մեր ասածները: Լենինականում ու Ղարաքիլիսայում անհատական խմբակային պարապմունքներն ամբողջովին տարվում են աշակերտների ե կոմսոմոլի միջոցով:

Յուրաքանչյուր 10—15 հոգի պարապողի համար նշանակվում ե հատուկ հսկիչ-կազմակերպիչ, վոր հեռու.ւմ ե ե հսկում պարապմունքներին, կարիքներին ե պահանջներին բավարարութեուն ե տալիս:

Բացի սրանից աշխատանքների ընթացքում

կազմակերպվում են նաև սովորեցնողներին ընդհանուր ժողովներ, վարտեզ լավում են զեկուցումներ պարապմունքների ընթացքի մասին և հարկ չեղած միջոցներ են ձեռք առնում նկատված բացերն ու թերուժյունները վերացնելու:

Յուրաքանչյուր հսկիչ ունենում է ճիշտ հաշվառում սովորողների և սովորեցնողների՝ նըրանց վերաբերող մանրամասն տվյալներով ու հասցեներով:

Յուրաքանչյուր ուսուցիչ իր հերթին պահում է աշխատանքի հաշվառման մասյան՝ թե չե՞րբ է սկսել պարապմունքը, ո՞ւմ հետ է պարապում (մանրամասն տվյալներով սովորողների մասին տես ձև № 1), վճիռ որերին ու ժամերին է պարապում. յուրաքանչյուր անգամ գրանցում է որվա պարապած դասին նյութը:

Մի խոսքով, անհատական-խմբակային պարապմունքը պահանջում է շատ կանոնավոր և պարզ կերպով դրված կազմակերպչական գործ, հսկառակ դեպքում բոլոր ջանքերն ապարդյուն կանցնեն:

Ղեկավարութունը. . . Անհատական-խմբակային պարապմունքների ընթացքում շատ մեծ նշանակություն ունի ուսուցչի աշխատանքների ղեկավարման խնդիրը: Գործը ղեկավարել հարկավոր է ուսուցչման առաջին որերից և այդպես

պարբերաբար մինչև ավարտելը: Դեռ գործը  
չսկսած սովորեցնողները համար կազմակերպվում  
են խորհրդակցություններ. տրվում են նրանց  
մեթոդական ցուցմունքներ: Պարապմունքի ըն-  
թացքում ուսուցիչները լսում են գլուղերում  
գրագիտական կամ տարրական-հանրակրթական  
դպրոցում դասեր: Կազմակերպվում են նրանց  
համար նույն դպրոցում փորձնական դասեր: Մին-  
չև գործի անցնելը՝ սովորեցնողները կարող են և  
շատ ցանկալի լինել, վոր լինեն պրակտիկանտներ  
դպրոցներում: Դա շատ նպատակահարմար միջոց  
է ապագա սովորեցնողին կազմակերպչորեն ու  
մեթոդապես պատրաստելու համար: Նա լսում է  
դասերը, հետևում է պարապմունքին, հարկ չեղած  
դեպքում ողնում է պարապող ուսուցչին, ու-  
սուցչի բացակայության ժամանակ փոխարինում  
է նրան: Այս ձևով վարժվում է և գործնակա-  
նորեն ծանոթանում գործին: Այս ձևն ընթացիկ  
ուսումնական տարում գործադրվում էր Ղարաքի-  
լիսայում. իբրև պրակտիկանտներ վարժվում են  
խմբակավարները:

Սրանից դատ շաբաթը մեկ անգամ, առնը-  
վազն չերկու շաբաթը մեկ անգամ ուսուցիչները  
հրավիրում են խորհրդակցություն, վորտեղ լրս-  
վում են զեկուցումներ նրանց պարապմունքների  
ընթացքի մասին և տրվում են համապատասխան

մեթոդական ցուցմունքներ: Չափազանց ոգտա-  
վեա կլինի, չեթե չերբեմն սրանց շրջանում կազ-  
մակերպվեն հրահանգչական ու մեթոդական բո-  
վանդակությամբ խորհրդակցություններ:

Ավելի քան արդյունավետ կլինեն աշխատանք-  
ները, չեթե նյութական միջոցները հնարավորու-  
թյուն տան այդպիսիներին մասնակից դարձնել  
ուսուցիչների համար կազմակերպվելիք վերա-  
պատրաստման դասընթացներին:

Ամբողջ գործի կազմակերպմանը և աշխա-  
տանքների ընդհանուր ղեկավարությանը ամե-  
նաակտիվ կերպով մասնակցում են՝ գլուղերում  
«ԿԱՆԸ»-ն բլիշը և խրճիթ-ընթերցարանը, իսկ  
շրջաններում՝ շրջանային «ԿԱՆԸ»-ն խորհուրդը  
և շրջադրուակոմիտեն: Կազմակերպչական խնդիր-  
ներում և իբրև հակիչներ գործին պարտավոր են  
աջակցել ի պաշտոնե նաև շրջանային լուս-տե-  
սուչները:

Մեթոդական ցուցմունքներ տալու համար՝  
գլուղում հրավիրվում ե հասակավորների գրա-  
գիտական կամ տարրական հանրակրթական դրպ-  
րոցի ուսուցիչը և դպրոցի մանկավարժական  
կազմը, իսկ քաղաքներում՝ դրա համար Լուս-  
բաժնի գիտությամբ ու համաձայնությամբ հրա-  
վիրվում են հասակավորների պարապմունքների  
մեթոդին ծանոթ ձեռնհաս ուսուցիչներ: Թիֆլ

ըստ տեղի կարիքի և պահանջի իրենք են վորոշում:

Յենթադրվում է առաջիկա ուսումնական տարվանից՝ 1929 — 30 թվականից ունենալ շրջանային բաղային գրագիտական կամ տարրական հանրակրթական դպրոցներ: Այս դեպքում արդեն գործի մեթոդական և կազմակերպչական դեկավարութունը շրջաններում կհանձնարարվի նման տիպի դպրոցներին:


### ՍՏՈՒԳՈՒՄ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքների վերջում շրջանային լուստեսչի և «ԿԱՆՆ»-ն բջիջի գրագետ անդամի և գյուղխորհրդի անդամի ներկայությամբ ուսուցիչն ստուգում է սովորողին: Ստուգումը կատարվում է գրույցի ձևով: Լավ կլինի, չեթե հնարավոր է, իհարկե, աշխատանքների ավարտելը գուգադիպի գրագիտական կամ գյուղում գոյութուն ունեցող տարրական հանրակրթական դպրոցների աշխատանքների ավարտելուն: Կազմակերպվում է հանդիսավոր չերեկո կամ ցերեկույթ, վորտեղ լավում է ուսուցչի զեկուցումը կատարած աշխատանքների մասին. բաժանվում է ավարտողներին վկայականներ սրանց գրագետ, կամ կիսագրագետ դառնալու մասին: Շատ ոգ-

տավետ կլինի, չեթե սովորողները նույն հանդի-  
սավոր նիստում բաժանորդագրվելին վորևե թեր-  
թի՝ «Մածկալ»-ին, «Ավանգարդ»-ին, «Բատ-  
րակ»-ին, «Հայաստանի աշխատավորուհուն»,  
«Կարմիր զինվորին»: Ցանկալի չե, վոր այս դեպ-  
քում ոգնության գա «ԿԱՆԸ»-ն բլիշը:

Աշխատանքի վերջում յուրաքանչյուր ուսու-  
ցիչ ներկայացնում ե հաշվետվություն՝ համա-  
ռոտ զեկուցումով պարապմունքների ընթացքի  
վերաբերյալ, նշելով նկատված բացերն ու թե-  
րությունները՝ իր առաջադրություններով նրանց  
վերացնելու մասին: Զեկուցման մեջ մատնա-  
նշում ե՝ չե՞րբ ե սկսել ու վերջացրել պարապ-  
մունքը, քանի՞ պարապմունք ե ընդամենն ունե-  
ցել, ի՞նչքան սովորող ե չեղել, քանի՞սն են դրան-  
ցից ավարտել, սովորողների մասին մանրաման  
տեղեկություններով (տես ձև № 1):

Այդ հաշվետվությունները գլուղի «ԿԱՆԸ»-ն  
բլիշը և խրճիթ-ընթերցարանն անփոփում են և  
ներկայացնում են «ԿԱՆԸ»-ն շրջանային խորհրդ-  
դին, իսկ վերջինն իր հերթին ամփոփում ե շրջ-  
ջանում տարվող անհատական-խմբակային պա-  
րապմունքների աշխատանքների ամբողջ պատ-  
կերը և ներկայացնում ե գավառ «ԿԱՆԸ»-ն գավ-  
խորհրդին և Լուսարածքին:



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- № 1. Սոցիալիզմի շինարարությունը և  
անդրազխտության վերացումը. հջ 47, գինը 5 կ.
- № 2. Ձեռնարկ «ԿԱՆԸ» բջիջների հա-  
մար. հջ 51. . . . . գինը 10 կ.
- 

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038904

[084]

ՊԱՏՎԵՐՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼ՝

A  $\frac{I}{4144}$

ՅԵՐԵՎԱՆ—ՊԵՏՐԱՅ.

ՅԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆԻՎ—„ԿՈՐՅԻ ԱՆՈՐԱԳԻՏՈՒ-  
ՔՈՒՅՆՐ“ ԸՆԿԵՐՈՒՅՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ.

---